ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 9/3

17 մայիսի 2016 թ.

Քննարկվեց «Բիէսէմբի» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ գործողությունն ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ:

«Բիէսէմբի» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ֆինանսների նախարարի 2015թ. հոկտեմբերի 23-ի թիվ 5012824 հանձնարարագրով Նոր Նորքի հարկային տեսչության աշխատակիցների կողմից «Բիէսէմբի» ՍՊԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների ճշտության ստուգում: 2015թ. դեկտեմբերի 15-ին կազմվել է թիվ 5012824 ստուգման ակտի նախագիծը: Ընկերությունը ներկայացրել է իր առարկությունները կապված ստուգման ակտի նախագծի հետ: 2015թ. դեկտեմբերի 28-ին կազմվել է թիվ 5012824 ստուգման ակտը, որը կողմը ստացել է 2015թ. դեկտեմբերի 30-ին: Ստուգման ակտով առաջադրվել է 3.565.287 դրամի լրացուցիչ հարկային պարտավորություն:

2016թ. հունվարի 29-ին «Բիէսէմբի» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որով խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 28.12.2015թ. թիվ 5012824 ստուգման ակտը:

ՀՀ վարչական դատարանի 04.02.2016թ. թիվ ՎԴ/0481/05/16 որոշման համաձայն հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Նախ անհրաժեշտ նշել, որ «Բիէսէմբի» ՍՊԸ-ի կողմից որևէ նորմի պահանջ չի խախտվել, 28.12.2015թ. թիվ 5012824 ստուգման ակտում տրված գնահատականները չեն համապատասխանում իրականությանը, որևէ ավել ծախսագրում չի կատարվել, բոլոր ծախսերը և փաստաթղթավորված են, և անհրաժեշտ, իսկ որանց վերաբերյալ պահանջները հստակ ու հասկանալի չեն, մտացածին ու արհեստական են:

Բացի այդ, խախտվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, որի համաձայն՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, բացառությամբ օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման, կամ այն դեպքերի, երբ վարչական մարմինը վարչական ակտ (ներառյալ՝ վարչական բողոքի վերաբերյալ ըստ էության որոշում) ընդունելիս գրավոր ձևով հիմնավորվել է, որ անհապաղ կատարումն անհրաժեշտ է՝ ելնելով հանրային շահերից:

ՀՀ վարչական դատարանն իր 04.02.2016թ. թիվ ՎԴ/0481/05/16 որոշմամբ ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 28.12.2015թ. թիվ 5012824 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել է վարույթ:

Քանի որ առկա չէ թիվ ՎԴ/0481/05/16 վարչական գործով գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, ինչպես նաև առկա չեն վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցումը բացառող հանգամանքներ, ուստի

հարկային մարմինն իրավունք չուներ ընկերության ունեցած գերավճարներն ուղղել կասեցված վարչական ակտով վերջինիս առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորությունների մարմանը: Ավելին, նշված ոչ իրավաչափ գործողության արդյունքում «Բիէսէմբի» ՍՊԸ-ին առաջադրվել են լրացուցիչ տույժեր և տուգանքներ:

Արդյունքում խախտվել են նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4 և 8 հոդվածների պահանջները, ըստ որոնց վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը և վարչարարությունը պետք է ուղղված լինի ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Մատնանշված հանգամանքների հիմքով ընկերությունը խնդրում է ունեցած գերավճարները 28.12.2015թ. կազմված թիվ 5012824 ստուգման ակտով վերջինիս առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորությունների մարմանն ուղղելու ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության գործողությունն ամբողջությամբ ճանաչել ոչ իրավաչափ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 23.10.2015թ. թիվ 5012824 հանձնարարագրի համաձայն Նոր Նորքի հարկային տեսչության աշխատակիցների կողմից «Բիէսէմբի» ՍՊԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների ճշտության ստուգում: Արդյունքում 28.12.2015թ-ին կազմվել է թիվ 5012824 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 3.565.287 դրամ:

29.01.2016թ-ին «Բիէսէմբի» ՍՊԸ կողմից հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 28.12.2015թ. թիվ 5012824 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի 04.02.2016թ. թիվ ՎԴ/0481/05/16 որոշման համաձայն հայցադիմումն ընդունվել է վարույթ: Ներկայումս գործը գտնվում է դատաքննության փուլում:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ շահութահարկի կանխավճարների վերահաշվարկման արդյունքում 09.03.2016թ-ին առաջացած գերավճարի գումարներն ուղղվել են Ակտով առաջադրված լրացուցիչ պարտավորությունների մարմանը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Վերոգրյալ իրավանորմի դրույթներից հետևում է, որ ընկերության կողմից Ակտը դատական կարգով վիճարկվելու պայմաններում անհրաժեշտ է ձեռնպահ մնալ դրա կատարմանն ուղղված գործողություններից, մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով նույնաբովանդակ հարցի կապակցությամբ Հանձնաժողովի նախկինում արտահայտած դիրքորոշումը, Հանձնաժողովը եզրակացնում է, որ այն գումարները, որոնք ուղղվել են Ակտով առաջադրված պարտավորությունների մարմանը, ենթակա են վերահաշվարկման (վերականգման): Միևնույն ժամանակ, ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչությանն անհրաժեշտ է ձեռնպահ մնալ Ակտով առաջադրված գումարների մարմանն ուղղված գործողություններից, մինչև թիվ ՎԴ/0481/05/16 գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

«Բիէսէմբի» ՍՊԸ գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝ **Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**